

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒՅՑ**  
Երևանի պետական համալսարանի  
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2022 թ. հոկտեմբերի 7-ին կայացած թիվ 4 նիստի

Գիտական խորհրդի 38 անդամներից նիստին մասնակցել են 28-ը:

Նախագահում էր խորհրդի նախագահ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ի.Շահագիջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» (ԱԴ 2021) թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվության հարցը:
2. ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվության հարցը:
3. ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրություն-2021» թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվության հարցը:
4. ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2021» թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվության հարցը:
5. Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը:
6. Կենսաբանության ֆակուլտետի կողմից «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին մասնակցելու համար թեկնածուների առաջադրման հարցը:
7. Ընթացիկ հարցեր:

1. ԼԱԵՅԻՆ՝ ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» մրցույթի (ԱԴ 2021) շրջանակներում իրականացվող թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, նշված մրցույթի (ԱԴ 2021) շրջանակներում իրականացվող 5 թեմաների դեկավարները: Ստորև ներկայացվում է դեկավարների ելույթի համարուտ տեքստը.

- Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ, կ.գ.դ. Կարեն Արամայիսի Ղազարյանը ներկայացրեց «Գյուղատնտեսական հողատարածքների աղակալումը որպես արդի էկոլոգիական հիմնախնդիր» դրանց բարելավման նորարարական մեթոդները» 21AG-4C075 ծածկագրով թեմայի ընթացիկ տարեկան հաշվետվությունը: Նա նշեց, որ հաշվետու տարում իրականացվել է Էջմիածնի տարածաշրջանի գյուղատնտեսական հողատարածքների աղակալվածության աստիճանի և ստորերկրյա ջրերի ռողողելի հատկությունների գնահատում: Ուսումնասիրվել է այդ տարածաշրջանում հանդիպող որոշ բուսատեսակների ֆիտոռեմեղիացիոն ներուժը և գնահատվել է այդ բուսատեսակներով ռեմեղիացիայի գործընթացի արդյունավետությունը ու ծախսատրությունը: Ինչպես նաև որոշ գործառության և ձևաբանական չափանիշների փոփոխության հիման վրա բացահայտվել են Արարատյան դաշտի հողերում և բնակլիմայական պայմաններում աճող որոշ հացազգի գյուղատնտեսական մշակաբույսերի դիմացկունության աստիճանն աղերի տարբեր խտությունների պայմաններում:
- Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Ռ.Ս. Հարությունյանը ներկայացրեց «SARS-CoV-2-ի հետ կապված գենոմային անկայունության նոր գենետիկական մարկերների ու դրա կարգավորման մոտեցումների մշակում» 21AG-1F068 ծածկագրով թեմայի ընթացիկ տարեկան հաշվետվությունը, նշելով, որ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է COVID-19 հիվանդների կլինիկական/կենսաքիմիական չափանիշների հավաքագրում, հիվանդության միջին և ծանր ընթացքով կանաց ու տղամարդկանց խմբերում ԴՆԹ-ի վնասվածքների մակարդակների և մտԴՆԹ-ի արտահոսքը կարգավորող ՍՄԵ1 ու ՕՊԱ1 գեների էքսպրեսիայի գնահատում:
- Կենսաքիմիայի, մանրէարանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ, կ.գ.դ. Աննա Արշակի Փոլայյանը, ներկայացրեց «Օրգանական թափոններից կենսազանգվածի և կենսաէներգիայի փոխակերպման կենսաքիմիական ուղիների բնութագրումը և օքսիդավերականգնողական կարգավորումը» 21AG-1F043 ծածկագրով թեմայի ընթացիկ տարեկան հաշվետվությունը: Թեմայի դեկավարն իր ելույթի ժամանակ նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները. ընդլայնվել է օգտագործվող թափոնների ցանկը, ներգրավվել են նոր մանրէներ, ուսումնասիրվել է դրանց կենսազանգվածի և կենսաօքանի արտադրությունը: Արդյունքները տպագրվել են 4 հոդվածի տեսքով և ներկայացվել տարբեր միջազգային գիտածողություններում:

- Կենդանաբանության ամբիոնի վարիչ կ.գ.դ. պրոֆ. Մարինե Սեմյոնի Առաքելյանը ներկայացրեց «Հայաստանի վտանգված և ինվազիվ կենդանատեսակների տարածման մողելավորումն ու համակարգումը» 21AG-1F033 ծածկագրով թեմայի ընթացիկ տարեկան հաշվետվությունը: Իր խմբի կողմից հաշվետու ժամանակատվածում կազմվել է ինվազիվ կենդանիների ցուցակ և տրվել որանց նկարագրությունները: Թեփուկաթեսավորների և սարդերի բազան համալրվել է նոր տվյալներով, ուսումնասիրվել է ԴՆԹ շտրիխ կողավորման մեթոդով: Հայաստանի մի շարք ջրակալներում և գետերում իրականացվել են ձկնաբանական ուսումնասիրություններ՝ պարզելու ինվազիվ ու վտանգված տեսակների առկայությունը: Կիմայական պայմաններում հազվագյուտ վտանգված տեսակների պոտենցիալ արեալների մողելավորումը կատարվել է Pelobates syriacus (VU) երկկենցաղ և Parvilacerta parva (CR), Phrynocephalus horvathi (CR), Eremias pleskei (CR) մողեսների տեսակների համար: Ցույց է տրվել կիմայի փոփոխության ազդեղությունը կուսածին մողեսների ցանցած եվոլյուցիայի վրա: Տպագրվել 10 հոդված, որից 9 - WOS- ԱԳ(İF) ունեցող պարբերականներում և 4 արտասահմանում տեղի ունեցող գիտաժողովի նյութեր:
- «Արաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ»-ի (ԱԴ 2021) շրջանակներում իրականացվող թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվությունները եզրափակեց կենսաբիոմիայի, մարդկարանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ., ավագ գիտաշխատող Նաիրա Ժորայի Սահակյանը, ով ներկայացրեց «Բուսական ծագմամբ միացությունների ներուժը սննդի և կերերի արտադրության կոնսերվանտների և նոր կենսաբանորեն ակտիվ հավելումների մշակման ոլորտում» 21AG-4D027 թեմայի շրջանակներում կատարած աշխատանքները: Սահակյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում կատարվել է պլանավորված ծրագիրը, որի ընթացքում ուսումնասիրվել են Հայաստանի բարձրավանդակում աճող բույսերից ստացված լուծամզվածքների հակաօքսիդանտային, հակամանրեային և հակաքաղցկեղային ազդեցության որոշ մեխանիզմներ: Արդյունքները տպագրվել են 1 հոդվածի և 5 թեզիսների տեսքով:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** լսելով թեմաների դեկավարների մեկ տարում կատարված աշխատանքների հաշվետվությունները, երաշխավորել վերոհիշյալ թեմաների հետազա ֆինանսավորումը:

**2. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՍՍՆ Գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող 12 թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվություն:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԿԱԱ քղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, նշված մրցույթի շրջանակներում իրականացվող թեմաների բոլոր դեկավարները կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Պ

.Հ. Վարդևանյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանազյույանը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Վարապետյանը, «Կենսաբանություն» գՀ ինստիտուտի սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ, կ.գ.դ. պրոֆեսոր Ս.Մ. Բաղայյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ն.Հ. Զաքարյանը, կենսաբիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտներ Հ.Հ. Փանոսյանը, Լ.Ս. Գաբրիելյանը, Ի.Լ. Բաղուկյանը, Ս.Վ. Մարությանը և նույն ամբիոնի ասխատենտ, կ.գ.թ. Ն.Վ. Ավթանդիկյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի գիտաշխատող, կ.գ.թ. Ա.Լ. Ասատրյանը և .ԵՊՀ Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող կ.գ.թ. Ս.Ա. Աղայանը: Ստորև ներկայացվում է համառոտ հաշվետվությունները.

• Պ.Հ. Վարդևանյանը նշեց, որ «Շիճուկային ալբումինի և նուկլեինաթթուների հետ որոշ դեղանյութերի կոմպլեքսագոյացման առանձնահատկությունների համեմատական հետազոտությունը» 21T-1F063 ծածկագրով թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է միաշղթա poly(rA), poly(rU) և երկշղթա poly(rA)-poly(rU)-ի հետ մեթիլենային կապույտի (ՄԿ) և եթիդիումի բրոմիդի (ԷԲ) լիզանդրների առանձին փոխազդեցությունը: Ստացված տվյալները ցույց են տվել, որ ալբումինը կարող է առաջացնել կոմպլեքսներ ԴՆԹ-սպեցիֆիկ որոշ լիզանդրների հետ, ինչը հայտնաբերվում է տարբեր մեթոդներով: Ընդ որում, H33258-ի դեպքում հիմնական ուժերն են ջրածնական կապերը և վանդեր-Վաալյան փոխազդեցությունները, իսկ ՄԿ-ի դեպքում առավել մեծ է կեկտրաստատիկ փոխազդեցության դերը: Երկու լիզանդի դեպքում էլ տեղի է ունենում սպիտակուցի կոնֆորմացիայի փոփոխություն, սակայն ՄԿ-ի դեպքում ալբումինի տարածական կառուցվածքը կայունանում է, մինչդեռ H33258-ի դեպքում ընդհակառակը, այն ապակայունանում է:

• Ս.Գ. Նանազյույանը ներկայացնելով «Պեստիցիդների կուտակումը և դրանց ազդեցությունը լեռնատափաստանային էկոհամակարգերի կենսաբազմազանության վրա» 21T-1F281 ծածկագրով թեմայի ընթացիկ տարեկան հաշվետվությունը նշեց որ ներկայացրած թեմայի շրջանակներում ընթացիկ տարվա համար օրացույցային պլանով նախատեսված բոլոր փուլերը իրականացվել են: Կատարվել է ՀՀ Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի կարտոֆիլի դաշտերից ուսումնասիրվող հողերի նմուշառում, գենետիկական մշտադիտարկում, միկրօբիոտայի տեսակային կազմի և հողերում ծանր մետաղների, պեստիցիդների որոշում, ինչպես նաև փափկամարմինների բազմազանության ուսումնասիրություն: Թեմայի շրջանակներում տպագրվել է 2 հոդված և ևս 2 հոդված գտնվում է նախապատրաստական փուլում:

• Ա.Ֆ. Վարապետյանի «COVID-19-կապակցված միկոզներով հիվանդների վերին շնչուղիների լորձաթաղանթի հիստոմորֆոլոգիական փոփոխությունների և տեղային իմունային պատասխանի գնահատումը» 21T-1F316 ծածկագրով թեմայի շրջանակում դեկավարի և անդամների կողմից կատարվել է COVID-19-ով հոսպիտալացված պացիենտների արյան ընդհանուր քննություն, երիթրոցիտների և լիմֆոցիտների բջջաբանական և կորիզաբանական հետազոտություն: Ստացված տվյալների հիման վրա պատրաստ է տպագրության 2 հոդված:

• Ա.Մ. Բաղալյանի խոսքով «Հայաստանի ազարիկոմիցետային ուտելի սնկերի և դեղասնկերի ռեսուրսային ներուժի գնահատումը նրանց կենսատեխնոլոգիական և կենսաբժշկական կիրառման նպատակով» 21T-1F228 ծածկագրով թեմայի աշխատանքների մի մասը ուղղված էն Հայաստանի տարածքում հանդիպող որոշ ազարիկոմիցետային դեղասնկերի և ուտելի սնկերի մորֆոլոգիական և էկոլոգիական առանձնահատկությունների և դրանց հակասնկային և պրոտեոլիտիկ ակտիվությունների ուսումնասիրմանը, ինչը իրագործվել է հաշվետու ժամանակահատվածում: Ըստ դեկավարի առանձնացվել են կաև սնկերի ակտիվ շտամներ, գնահատվել դրանց կենսատեխնոլոգիական սերուժը:

• Ն.Հ. Զարարյանի կողմից «Մակարույծ ծաղկավոր բույսերի նոր տեսակների մոնիթորինգ և տարածված ներկայացուցիչների դեղաբանական ակտիվության գնահատում» 21T-1F334 ծածկագրով թեմայի ընթացիկ տարեկան հաշվետվության ժամանակ նշվեց, որ ներկայացրած նախագծի շրջանակներում ընթացիկ տարվա համար օրացույցային պլանով նախատեսված բոլոր փուլերը իրականացվել են: Իրականացվել է Ճրազախոտազգիների (Orobanchaceae Vent.) գիտության համար նոր տեսակների պոպուլյացիաների մոնիթորինգ, որը կրում է շարունակական բնույթ: Կատարվել է մակարույծ և դրանց տեր բույսերի տեսակների հավաք և նույնականացում: Իրականացվել է որոշ նույնականացված տեսակների հակաօքսիդանտային ակտիվության որոշում: Թեմայի շրջանակներում նախատեսված տպագրություններից 1 հոդված գտնվում է նախապատրաստական փուլում և 1 –ը՝ հանձնվել է տպագրության:

• Հ.Հ. Փանոսյանը «Հայաստանի էքստրեմալ միջավայրերից մեկուսացված թերմոֆիլ և հալոֆիլ մանրէների էկզոպոլիսախարիդների արտադրությունն ու բնութագրումը» 21T-1F191 ծածկագրով թեմայի հաշվետվության ժամանակ նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ամբիոնի մանրէային հավաքածուից էկզոպոլիսախարիդ արտադրող մանրէների նախնական սկրինինգ, ընտրվել են ակտիվ արտադրիչներ: Արդյունքները ստենդային գեկուցմամբ ներկայացվել են «Էքստրեմոֆիլների 13-րդ միջազգային կոնքրեսին»:

• Լ.Ս. Գարբիելյանը նշեց, որ «Նոր մոտեցումներ միկրոօրինուոների կենսագանգվածի ելքի խթանման ու հակամանրէային հատկություններով նանոմասնիկների կենսասինթեզի համար» 21T-1F179 ծածկագրով թեմայի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Spirulina platensis ցիանոբակտերիայի կենսագանգվածից «կանաչ սինթեզի» եղանակով արձարի նանոմասնիկների սինթեզ, և ուսումնասիրվել է դրանց հակարակտերիական ակտիվությունը: Տպագրվել են 1 հոդված և 5 գիտաժողովի նյութեր:

• Ի.Լ. Բաղուկյանը «Հայաստանի հանրապետության տարածքում բնակվող տարբեր էթնիկական խմբերի հեշտոցային միկրոբիոմի կենսաբազմազանությունը և կաթնաթթվային բակտերիաների ազդեցությունը սեռահասուն կանանց առողջության վրա» 21T-2I019 ծածկագրով թեմայի ընթացիկ տարեկան հաշվետվության ժամանակ, նշեց որ հաշվետու ժամանակահատվածում վերցվել է

68 հեշտոցային նմուշ տարբեր էթնիկական խմբերին պատկանող կանանցից, մեկուսացվել 200-ից ավել կաթնաթթվային բակտերիաների շտամեր և 20-ից ավելի Candida ցեղին պատկանող ախտածին խմորասնկեր: Արդյունքները տպագրվել են 1 հոդվածի տեսքով:

• **Ս.Վ.** Մարությանի «Մեղվի մայրակաթը որպես ռադիոպաշտպանիչ և հակաօքսիդանտային պայքարի նոր կենսաքիմիական դեղամիջոց» 21T-1F300 ծածկագրով թեմայի կատարման ժամանակ, ըստ դեկավարի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է խմորասնկերում պուրինային նուկլեոտիդների դեղամիխացման և ԱԵՖազային ակտիվության փոփոխության ուսումնասիրում ռենտգենյան ձառագայթների և մրցիմետրական ալիքների ազդեցությամբ միջավայրում մեղվի մայրակաթի առկայության և բացակայության պայմաններում: Արդյունքները ներկայացվել են 3 միջազգային գիտաժողովներում:

• **Ն.Վ.** Ավթանդիլյանի «Դեղաբույսերի լուծամզվածքների ազդեցությունը քաղցկեղային բջջի ազդանշանային համակարգի և բջջային ցիկլի կարգավորիչ թիրախների վրա. դեղաբույսերը որպես քաղցկեղի զարգացման կանխարգելիչ միջոց» 21T-1F283 ծածկագրով թեմայի ընթացիկ տարեկան հաշվետվության ժամանակ խոսվեց այն մասին, որ հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է բջջային կուլտուրայում տարբեր դեղաբույսերի ազդեցությունը ֆուֆոխիտոլ-3-կինազ ֆերմենտի ակտիվության վրա: Արդյունքները տպագրվել են 2 հոդվածի և 2 գիտաժողովի նյութի տեսքով:

• **Ա.Լ.** Ասատրյանը ներկայացրեց «Հակաքաղցկեղային ալկիլացնող դեղերի համակցված ներգործությունը ԴՆԹ-ի կառուցվածքը և փաթեթավորումը կարգավորող ֆերմենտների ակտիվության վրա» (ծածկագիր 21T-1F014) թեմայի հաշվետվությունը:

Հետազոտությունների առաջին փուլում ուսումնասիրվեց ցիսպլատինի տոքսիկ ազդեցության հասակային առանձնահատկությունները առնետների ուրցագեղձում և լյարդում: Օրգանների հիստոպատոլոգիական զննումը ցույց տվեց, որ ցիսպլատինի ներփորովնային ( $10\text{մգ}/1000\text{գ}$ ) ներարկումից 48Ժ հետո 6 շաբաթական առնետների ուրցագեղձում և լյարդում տեղի են ունենում զանգվածային դեգեներատիվ փոփոխություններ: Դիտված փոփոխությունները բացակայում են 10 շաբաթական կենդանիների լյարդում: Կենսաքիմիական հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ առնետների սեռական հասունացման շրջանում (6-10 շաբաթ) մոտ 2-2,5 անգամ նվազում է ՊԱՌՊ 1-ի ակտիվությունը: Ցիսպլատինի ներարկումը ունի հակադիր ազդեցություն 6 և 10 շաբաթական կենդանիների լյարդում: 6շաբաթական կենդանիների մոտ ցիսպլատինը ճնշում է ֆերմենտի ակտիվությունը ավելի քան 3 անգամ, մինչդեռ 10 շաբաթական կենդանիների լյարդում ֆերմենտի ակտիվությունը խթանվում է 2 անգամ:

• **Ս.Ա.** Աղայանի «Հայաստանի չվող թոշունների ներուժի գնահատումը որպես տրանսմիսիվ զոռնողների հարուցիչների պահեստարաններ և

փոխադրողներ» (ծածկագիր 21T-1F219) թեմայի հաշվետվության ժամանակ նշվեց այն, որ Գեղարքունիք, Վայոց ձոր, Արարատ և Տավուշ մարզային գործուղումերի ընթացքում հավաքագրվել է 204 թռչնի արյան նմուշ: Նմուշների մի մասից արդեն անջատվել է ԴՆԹ և մշակվել ստացված տվյալները: Նախապատրաստվել է ակնարկային հոդված «Թռչունների դերը տարբեր պաթոգենների տարածման և շրջափուլի մեջ» թեմայով՝ իրականցնելով զրականության հավաք: Թիմի նախկինում մշակված տվյալներն ամփոփելով, տպագրվել է մեկ հոդված՝ «The Breeding Avian Fauna of Marmarik Reservoir, Kotayk Region, Armenia»:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ լսելով թեմաների դեկավարների մեկ տարում կատարված աշխատանքների հաշվետվությունները, երաշխավորել վերոհիշյալ թեմաների հետագա ֆինանսավորումը:

3. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրություն-2021» թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ քղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, նշված մրցույթի շրջանակներում իրականացվող թեմաների դեկավարները.

### 1. Ղեկավար՝ Ա. Ա. Մարգարյան

Թեմայի անվանումը՝ «Մետաղակայուն մանրէները որպես շրջակա միջավայրի կենսավերականգնման միջոցներ» (21SCG-1F016 ծածկագիր)

Ա. Ա. Մարգարյանի ելույթի ժամանակ նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 1-տարվա համար նախատեսված աշխատանքները, տարբեր հանքարդյունաբերական տարածքներից մեկունացվել են նոր մետաղակայուն մանրէներ, ուսումնասիրվել է մետաղակայունությունը, մետաղներ կենսակուտակելու և վերականգնելու ունակությունը: Արդյունքները ներկայացվել են 3 միջազգային գիտաժողովներում:

### 2. Ղեկավար՝ Ն. Վ. Ավթանդիլյան

Թեմայի անվանումը՝ «Հակաքաղցկեղային թերապիայում բուսական ծագման և քիմիաթերապևտիկ միացությունների համակցումների կենսաքիմիական և իմունաբանական ուսումնասիրությունները» (20TTSG-1F004 ծածկագիր):

Ն. Վ. Ավթանդիլյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախատեսված աշխատանքները. որոշվել է տարբեր բջջային կուլտուրաների վրա դեղաբույսերի լուծամզվածքների և որոշ քիմիաթերապևտիկ

միացությունների համակցումների ցիտոտոքսիկ ազդեցությունը: Արդյունքները տպագրվել են 1 հոդվածի և 3 գիտաժողովի նյութի տեսքով:

### 3. Ղեկավար՝ Ա.Ս. Ղազարյան

Թեմայի անվանումը՝ «Կենսանվտանգության կարողությունների զարգացում Հայաստանում. Կարնասունները որպես հիվանդությունների վեկտորներ» (ծածակագիր 21SCG-1F015)

Ա.Ս. Ղազարյանը իր խոսքում ներկայացրեց թեմայի շշրջանակներում իրականացվող աշխատանքները. նշեց, որ ընտրված տեսակների համար ստեղծվել են տվյալների շտեմարան EPICOLLECT 5 առցանց բազայում, ինչպես նաև ընտրված տեսկաների տարածվածության, դրանց հնարավոր բնակատեղերի քարտեզներ: Իրականացվել է նմուշառում և կատարվել է չղջիկների արյան քիչների հետզոտություններ, որի արդյունքները տպագրվել են (SCOPUS (Rank: 38/183 (Q1)) և ներկայացվել են 3 գիտաժողովներում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ թեմաների հետազա ֆինանսավորումը:

4. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2021» թեմաների ընթացիկ տարեկան հաշվետվության հարցը:

### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

- ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի առկա ասպիրանտ Ռուզաննա Շուշանյանը: Թեմայի անվանումն է «Գլխուղեղի տարբեր բաժինների ախտահյուսվածաբանական առանձնահատկությունների ուսումնա-սիրությունը ներողեգեներացիայի պայմաններում» (ծածկագիր 21AA-1F041): Ասպիրանտը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքը. հիպոբարիկ հիպոքսիայի ազդեցության պայմաններում կատարվել են առնետների արյան լիմֆոցիտների բջջաբանական և ուղեղի հիստոմորֆոլոգիական հետազոտություններ: Ստացված տվյալների հիման վրա պատրաստ է տպագրության 2 հոդված:
- ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մերի Խոկանդարյանը: Թեմայի անվանումն է «Ralstonia eutropha մանրէի հետերոտրոֆ աճման տարբեր պայմաններում H2-օքսիդացնող հիդրօքենազային ակտիվության և կենսաէներգետիկական չափանիշների ուսումնասիրում» (ծածկագիր 21AA-1F025): Մ. Խոկանդարյանի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Ralstonia eutropha-ի կուլտիվացում խմորասնկային լուծամզվածքի բաղադրիչների (L-ամինաթթուներ և վիտամիններ) և կաթամթերքային

շիճուկի (պանրի և կաթնաշոռային շիճուկ) առկայությամբ, ուսումնասիրվել է վերը նշվածների ազդեցությունը բակտերիաների աճի և Հիդրոգենազների գործունեության վրա: Տպագրվել է 2 թեզիս: Տպագրության է նախապատրաստվել 1 հոդված:

- ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Լիանա Վանյանը: Թեմայի անվանումն է «*E. coli*-ի հիդրոգենազների դերի պարզաբանումը զյուկողի տարբեր կոնցենտրացիաների խմբման ընթացքում էներգիայի սահմանափակ պայմաններում» (ծածկագիր 21AA-1F004): Հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտը հետազոտել է հիդրոգենազների դերը էներգիայի պահպանման գործընթացում: Ուսումնասիրվել է ՄԶԼ-1 և ՄԶԼ-2 համալիրների բաղադրիչներ հանդիսացող Հիդ-3-ի և Հիդ-4-ի յուրաքանչյուր ենթամիավորի դերը զյուկողի 2 գ լ -1 (ցածր) և 8 գ լ -1 (բարձր) կոնցենտրացիաների խմբման ընթացում: Տպագրվել է 1 հոդված և 1 թեզիս:
- ԵՊՀ-ի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հեռակա ասպիրանտ Ալիսա Մանուկյանը, Թեմայի անվանում՝ «Սուրափիկովայրկյանային իմպուլներով արագացված էլեկտրոնային փնջերով ճառագայթման մոլեկուլային կենսաբանական էֆեկտների գնահատում նորմալ և ուռուցքային բջիջներում» (ծածկագիր 21AA-1F034): Հաշվետու ժամանակաշրջանում իրականցվել է արագացված էլեկտրոններով ճառագայթած նորմալ և ուռուցքային բջիջներում ԴՆԹ երկշղթա կտրվածքի վնասվածքների և ռեպարացիայի կինետիկայի վերլուծությունը:
- ԵՊՀ կենդանաբանության ամբիոնի հեռակա ասպիրանտ Լևոն Արթուրի Հարությունյանը: Թեմայի անվանումն է «Հարավային կովկասում սոցիալ-էկոլոգիական իրավիճակի հետևանքները գորշ արջի (*Ursus arctos*) պոպուլյացիայի վրա» (ծածկագիր 21AA-1F033): Հաշվետու ժամանակաշրջանում ասպիրանտը իրականացրել է առաջին տարվա համար ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները, հավաքագրել է Հարավային Կովկասում արջի տարածավածության բոլոր հնարավոր կետերը, քարտեզագրել հավաքագրված տվյալները, մոդելավորել նախնական Հարավային Կովկասում հնարավոր բնակատեղերի առակությունը: Լ. Հարությունյանը նշեց, որ պատրաստվում է հոդված, որը մինչև տարվա վերջ կհանձնվի տպագրության, իսկ նախնական արդյունքների վերաբերյալ կգեկուցվի նոյեմբերին Վրաստառում տեղի ունեցող SOMO աշխատաժողովին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ թեմաների հետազա ֆինանսավորումը:

**5. ԼՍԵՑԻՆ՝** Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահի թեկնացուի առաջադրման և ընտրության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, ով առաջադրեց Լիլիթ Գարբիելյանի թեկնացությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** բաց քվեարկության արդյունքում Լիլիթ Գարբիելյանը ընտրվեց կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ:

**6. ԼՍԵՑԻՆ՝** Կենսաբանության ֆակուլտետի կողմից «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին մասնակցելու համար 5 թեկնածուների առաջադրման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, ով ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետի կողմից առաջադրվող թեկնածուներին

- Կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ բակալավրի «Կենսաքիմիա» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողության Աննա Մարի Ղազարյան:

Աննա Մարի Ղազարյանը պարտաճանաչ, խելացի ուսանողության է, կարծ ժամանակահատվածում ծանոթացել է մանրէարանական և կենսաքիմիական որոշ մեթոդների, կարողանում է արագ կողմնորոշվել, հմուտ օգտվել ժամանակակից սարքավորումներից: Ա. Ղազարյանը հանդիսանում է կենսաբանության ֆակուլտետի ուսանողական խորհրդի գիտակրթական հանձնաժողովի պատասխանատու, ինչպես նաև ուսանողական գիտական ընկերության անդամ: Մասնակցել է տարբեր գիտական միջոցառումների (կից ներկայացված են փաստաթղթերը):

- Կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ բակալավրի «Կենսաքիմիա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող Մաֆֆի Շահմուրադյան:

Մաֆֆի Շահմուրադյանը խելացի ուսանող է, ակտիվ մասնակցում է ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը և առաջադրված գիտական խնդիրների լուծմանը: Ներկայումս հանդիսանում է կենսաբանության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում տարբեր գիտական միջոցառումներին, մրցաշարերին և բուհական ակումբային առաջնություններին (կից ներկայացված են դիպլոմները և շնորհակալագրերը), մեծ ուշադրություն է դարձնում ինքնակրթությանը և ինքնակատարելագործմանը, պատրաստակամ է

ընկերների հետ կիսվելու իր գիտելիքներով և հմտություններով: Մասնակցել է նաև կամավորական աշխատանքներին: Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի ուսանող անդամ է:

- Կենսաբանության ֆակուլտետի կենսաբիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի «Ընհանուր և բժշկական կենսաբիմիա» մագիստրոսական կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողության համար:

Էղիտա Նադիրյանն ունի բարձր առաջադիմություն, մասնակցում է գիտահետազոտական աշխատանքների նախազմանը, իրականացմանը և վերլուծմանը, մասնակցել է տարբեր միջազգային գիտժողովների, հանդիսանում է գիտական հոդվածի համահեղինակ, ամբիոնի կրթական ծրագրերի հավատարմագրման խմբի անդամ է: Նա նաև ամբիոնի ավագ լաբորատուր է և գիտական թեմայի կատարող: Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի ուսանող անդամ է:

- Կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի «Կենդանաբանություն և մակարուծաբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողություններ Արևիկ Ղոմաջյան և Սեդա Աղամյան:

Արևիկ Ղոմաջյանը համահեղինակ է միջազգային ամսագրում հրապարակված հոդվածի և նախատեսում է հրապարակել ևս 3 հոդված, ընդգրկված է 3 գիտահետազոտական ծրագրերում, եղել է կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳՀ նախագահ, մասնակցել է բնագետ ուսանողների մրցաշարին՝ գրավելով երրորդ հորիզոնականը, մասնակցել է մասնագիտական մի շարք դասընթացների և աշխատաժողովների, ներգրավված է եղել միջազգային փոխանակման ծրագրերում (Երազմուս ծրագիր՝ 2 անգամ), աշխատել է որպես ուսուցիչ մասնավոր դպրոցում, կատարել է կամավորական աշխատանքներ Տարտուի Մաշտոց հայկական դպրոցում:

Սեդա Աղամյանը համահեղինակ է միջազգային ամսագրում հրապարակված հոդվածի և ևս մեկը ուղարկվել է տպագրության, ընդգրկված է միջազգային գիտահետազոտական ծրագրում, հանդիսանում է մի շարք գիտական միջոցառումների համակազմակերպիչ, մասնակցել է մասնագիտական մի շարք դասընթացների և աշխատաժողովների, ներգրավված է եղել միջազգային փոխանակման երազմուս ծրագրին, կատարել է կամավորական աշխատանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ներկայացված ուսանողների բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին «Լավագույն ուսանող 2022» հանրապետական մրցույթին կենսաբանության ֆակուլտետից առաջարկել ներկայացված ուսանողների թեկնածությունները:

7. ԱՄԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ, Զվարթ Մովսիսյանի ատեստավորման հարցը (գիտական դեկավար կ.գ.դ., դոցենտ Ա. Պ. Անտոնյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ. Վարդենեանյանը: Նշվեց, որ Զվարթ Մովսիսյանը հանձնել է ստուգարք “Ինֆորմատիկա” առարկայից և քննություն “Անզերեն լեզու” առարկայից գերազանց զնահատականով: Հաշվետու ժամանակաշրջանում տպագրվել են 3 հոդված, 4 թեզիս և տպագրության է հանձնվել 1 հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով 2021-2022 թթ. Զվարթ Մովսիսյանի կատարած աշխատանքը և ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել նրան:

Գիտական խորհրդի նախագահ՝  
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.

Գիտական խորհրդի քարտուղար՝  
դոցենտ՝



Է.Ս. Գևորգյան

Ի.Վ. Շահազիլյան